ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2026 թվականի

հունվարի 30-ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում ֆակուլտետում /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/

2. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025-2026 ուստարվա առկա ուսուցմամբ «Կառավարման հոգեբանություն» մասնագիտացմամբ և հեռակա ուսուցմամբ «Կիրառական հոգեբանություն» մասնագիտացմամբ մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ամփոփում /զեկ.՝Հ.Ավանեսյան, Ն.Հարոյան/

3. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2021-2025 թվականների փետրվարին հրամանագրված, ինչպես նաև սույն թվականի մարտ-ապրիլ ամիսներին ուսումնառությունն ավարտող հայցորդների/ասպիրանտների տարեկան ատեստավորման հարցը։

4.2024/2025 թթ. ռազմավարական ծրագրի հաշվետվության հաստատում

5. Ընթացիկ հարցեր։

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում ֆակուլտետում /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/

Լսվեց – Ա. Բաղդասարյանի զեկույցը։
Քննարկվեց քննաշրջանի ընթացքը, արձանագրված արդյունքները և առկա կազմակերպչական հարցերը: Նշվեց նաև, որ բոլոր դասախոսները վերանայեն իրենց առարկաների համար դասընթացների պլանները և մինչև փետրվարի 9-ը տեղադրեն Moodle հարթակում:
Որոշվեց – ընդունել քննաշրջանի ամփոփման վերաբերյալ զեկույցը ի գիտություն:

Ն.Խաչատրյանը ևս ներկայացրեց, թե ինչպես լրացնել դասընթացի օրացուցային պլանը։

2. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025-2026 ուստարվա առկա ուսուցմամբ «Կառավարման հոգեբանություն» մասնագիտացմամբ և հեռակա ուսուցմամբ «Կիրառական հոգեբանություն» մասնագիտացմամբ մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ամփոփում /զեկ.՝Հ.Ավանեսյան, Ն.Հարոյան/

Քննարկվեց պաշտպանությունների կազմակերպումը և արդյունքները:
Որոշվեց – հաստատել մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ամփոփումը:

3. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2021-2025 թվականների փետրվարին հրամանագրված, ինչպես նաև սույն թվականի մարտ-ապրիլ ամիսներին ուսումնառությունն ավարտող հայցորդների/ասպիրանտների տարեկան ատեստավորման հարցը:

Ա. Բաղդասարյանը ներկայացրեց համապատասխան տեղեկատվություն 2025 թ. մարտ–ապրիլ ամիսներին ուսումնառությունն ավարտող հայցորդների/ասպիրանտների տարեկան ատեստավորման հարցը:
Որոշվեց – հաստատել ներկայացված թեկնածուների տարեկան ատեստավորման արդյունքները:

4.2024/2025 թթ. ռազմավարական ծրագրի հաշվետվության հաստատում:

Ն.Ալավերդյանը ներկայացրեց 2024/2025 թթ. ընթացքում իրականացված գործողությունները: Քննարկվեց կատարման ընթացքը:

Որոշվեց – հաստատել 2024/2025 թթ. ռազմավարական ծրագրի հաշվետվությունը:

5. Ընթացիկ հարցեր
Քննարկվեցին ընթացիկ կազմակերպչական բնույթի հարցեր:
Որոշվեց – ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ ___Ա.Բաղդասարյան_____
Քարտուղար ___Վ.Պապոյան_____